

գաւորը ոչ միայն արքունի դանձր ողորմութեանց համար կը պարպէ, այլ նոյնիսկ արքունի պալատին որմերուն զարդերը, գորգերը եւ այլն, բոլորն ալ կապտելով, վաճառելով, արդիւնքը նոյնպէս կը բաժնէր թշուառներու:

Արար Իստախիւր պատմիչը կը յիշէ որ Դուինի մէջ «Հիւսէին անդ ասուիս ազնիւս եւ գորգս եւ խոնջանունս, եւ կերպասս ընտիրս ի պէտս բարձից եւ բաստեռաց: Էր նոցա ներկ մի որգան կարմիր, որով դասուիս ներկանէին: Շինէին անդ եւ զիպակս մեծազինս մետաքսեայ, ծաղիկեալ երգինեանդն գունով»⁽¹⁹⁾: Իսն Հաուզալ (902–968) կ'աւելցնէ որ մինչեւ Տէրպէնտ Հայաստան կը նկատուէր, եւ նոյնիսկ Արտեպիլի մէջ հայերէն կը խօսէին բնակիչները, այսպէս ցոյց տալով Հայ մշակութային ծաւալման սահմանները իր օրով, այսինքն ժ դարուն: Կը վկայէ որ Տէրպէնտի մէջ «կը հիւսնէ կապերտներ կամ գորգեր», իսկ ի Դուին «կ'արտադրեն նուրբ վարադոյրներ եւ գորգեր»⁽²⁰⁾:

972ին Հայոց Խաչիկ Կաթողիկոսը Արգինայի (Շիրակ) մէջ շինած կաթողիկէն «զարդարեաց մեծապայծառ, ծիրանածաղիկ, ոսկեթել անկուածովք»⁽²¹⁾: Իսկ Գաղիկ Շահնշահի (989–1020) կինը Կատրամիտէ թագուհին Անիի կաթողիկէն «զարդարեաց ի զարդ ծիրանեծաղիկ, ոսկեթել նկարադործ անկուածոց»⁽²²⁾: Տարակոյս չկայ որ հոս խօսքը ոսկեթել կամ արծաթաթել հիւսուած գորգերու մասին է: Ասոնց նմաններն են որ այժմ կը կոչուին «Բոլոնէզ» գորգեր, որոնց մասին պիտի խօսինք իրենց կարգին:

982էն Պարսիկ անանուն աշխարհագրի մը մօտ կը վկայուի որ «Խոյ, Բերկրի, Արճէշ, Ախլաթ, Նախիջևան, Պիթլիս (Բաղէշ) ամէնքն ալ մեծ կամ փոքր ոստաններ են, բարգաւաճ, հաճելի, բազմամարդ, ունենալով հարստութիւն եւ վաճառականներ: Անոնք կ'արտադրեն մեծ քանակութեամբ զիլու-գորգեր (զիլու-հա-էյի գալի), լաւ դօտիներ»⁽²³⁾: Նոյն աշխարհագիրը անդ այլուր կը վկայէ որ «Վարդանաշատ բարգաւաճ քաղաք մըն է, ուրկէ կու գան զիլու եւ աղօթելու-գորգեր»⁽²⁴⁾:

(19) Կ. Եղեանցի Պատ. Ղեւոնդեայ. Ս. Պետերբուրգ. 1887, էջ ՀԱ. Ծանօթ. Թիւ 1:

(20) The Oriental Geography of Ebn Haukal. — Sir William Ouseley, London, 1800, էջ 159 եւ 161: Ասոնցմէ էր անշուշտ Պար Մառուանէ Տուղրիլ պէկի զորքուած տասը ջորերեւ վրաններու յատուկ ծածկոցները եւ վարադոյրները, 1048ին երբ Պար Մառուան տէր էր Հայաստանի:

(21) Պատ. Տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885, էջ 185: Շահնազարեան հրատ. էջ 172:

(22) Անդ, էջ 256:

(23) Hudad al-Alam. — London, 1937, էջ 143: Գէորգ զպիւր Պալատցի իր Պարսկահայ բառարանին մէջ կ'ըսէ. «Զիլու. — է տեսակ իմն կարպետի, որ լինի ստուար եւ կարծր, զոր յաճախ տարածեն շինականք»: «Վարպետ»ով ան գորգ կը հասկնայ եւ ոչ թէ կապերտ (քիլիմ): Զիլուն ըլլալու է այն ամուր բանուած, թաւախաւ գորգը, որ դեռ մինչեւ մեր օրերը Հայաստանի այս մասերուն մէջ կը հիւսուէին, եւ իրենց կարծրութեան համար միայն կը կոչուէին «քրդու գորգ», ինչպէս որ կարծր ընկոյզ մը ծանօթ էր իր քրդու ընկոյզ:

(24) Անդ, էջ 142: